«Յունիբանկ» ԲԲԸ Վարչության 30.07.2024թ. որոշման համաձայն, բանկի ներքոնշյալ սակագները գործել են մինչև 06.08.2024թ.:

Տեղեկատվական ամփոփագիր					
Ավանդի հիմնական պայմանները					
Ավանդի ներդրման արժույթը			**ՀՀ դրամ**	**ԱՄՆ դոլար**	**Եվրո**
Ավանդի ներդրման նվազագույն գումարը					
Ֆիզիկական անձանց համար			100,000	250	250
Ա/Ձ կամ իրավաբանական անձանց համար			1,000,000	2,500	2,500
Ավանդի ներդրման ժամկետը	**Տոկոսների վճարման կարգը**		**Տարեկան անվանական տոկոսադրույք**		
730 օր	ամենամյա	Քարտային հաշիվ /Բանկային հաշիվ	9.5%	3.5%	2.0%
			Տարեկան տոկոսային եկամտաբերություն		
			9.91%	3.55%	2.02%
Ավանդի առավելագույն գումարը *					
Ֆիզիկական անձանց համար			100,000,000	250,000	250,000
Ա/Ձ կամ իրավաբանական անձանց համար			200,000,000	500,000	500,000
Ավանդի գումարի ավելացում			Թույլատրվում է կատարել առանց գումարային և քանակային սահմանափակման՝ ավանդի գործողության ողջ ընթացքում		
Ավանդի գումարի նվազեցում			**Ֆիզ.անձանց դեպքում՝** ավանդի ներդրման օրվանից մինչև 90 օր ներառյալ ժամանակահատվածում՝ տվյալ պահին Բանկում գործող ցպահանջ ավանդի տոկոսադրույքով **Իրավաբանական անձանց դեպքում՝** ավանդի ներդրման օրվանից մինչև 90 օր ներառյալ ժամանակահատվածում ավանդի նվազեցում չի թույլատրվում		
			Ավանդի ներդրման օրվանից 91 օրվանից սկսած՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի		
*Առավելագույն գումարը գերազանցող ավանդների համար տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:					
Ժամկետային ավանդ, որը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանց համար:					
Հաճախորդի ցանկությամբ տոկոսները կարող են ավելացվել (կապիտալացվել) ավանդի մնացորդին					
Ավանդի արժույթի փոխարկում չի թույլատրվում:					
Մեկ հաճախորդին թույլատրվում է ներդնել մեկական ավանդ յուրաքանչյուր արժույթով:					

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սակագներ և տուժանքներ

Սակագներ և տուժանքներ

1. Ժամկետային ավանդի հաշվի սպասարկումն իրականացվում է բանկային հաշիվների միջոցով: Եթե հաճախորդը «Յունիբանկ» ԲԲԸ-ում չունի բանկային հաշիվներ, ապա դրամային ժամկետային ավանդ ներդնող ավանդատուի համար Բանկը բացում է բանկային հաշիվ ՀՀ դրամով, իսկ արտարժույթով ժամկետային ավանդ ներդնելու դեպքում բացի արտարժութային բանկային հաշվից, բացվում է նաև ՀՀ դրամով բանկային հաշիվ:

2. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ժամկետային ավանդատու ֆիզիկական անձ հաճախորդների հաշիվների համար յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 1200 (մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ և 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների և դրանց կրկնօրինակների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:

3. Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ ավանդատու հաճախորդների յուրաքանչյուր հաշվի տարեկան սպասարկման վճարը կազմում է համապատասխանաբար 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ և 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ավանդային հաշվի քաղվածքների տրամադրումն առանց ժամկետի սահմանափակման իրականացվում է անվճար: Առանձին տեղեկանքի կամ փաստաթղթի կրկնօրինակների տրամադրման վճարը կազմում է 1000 ՀՀ դրամ, իսկ թղթապանակի (որոշակի ժամանակաշրջանի փաստաթղթերի) համար՝ 5000 ՀՀ դրամ: Բանկն իրավասու է միակողմանիորեն փակելու հաճախորդի բանկային հաշվեհամարը, եթե հաճախորդը չի ապահովել Բանկի սակագներով սահմանված սպասարկման վճարները, չնվազող մնացորդը և/կամ 1 տարուց ավել գործարքներ չի իրականացրել:

4. Ավանդատուի պահանջով ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում ավանդի գումարից գանձվում են արդեն իսկ վճարված տոկոսագումարները:

5. Բանկային ավանդի պայմանագրի գործողության ժամկետն երկարաձգվում է ավանդի պայմանագրով սահմանված դեպքերում և կարգով: Եթե ավանդատուն ավանդի ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ավանդի գումարը, ապա ըստ պայմանագրում կատարված նշումի՝ կամ երկարաձգվում է պայմանագրի գործողության ժամկետը պայմանագրով սահմանված պայմաններով և երկարաձգման պահին բանկում գործող տոկոսադրույքով, կամ ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի բանկային հաշվին, որի նկատմամբ կիրառվում են բանկային հաշվի համար նախատեսված պայմանները: Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց ՀՀ դրամով և արտարժույթով բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվում է 0% տարեկան դրույքով՝ բանկում ներդրված փաստացի ժամանակահատվածի համար: Բանկն իրավունք ունի փոփոխել բանկային հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքը՝ Բանկի Խորհրդի կողմից հաստատված դրույքների և սակագների համաձայն, եթե այլ բան նախատեսված չէ բանկային հաշիվների սպասարկման պայմանագրով:

6. Ավանդատուի հաշվին Ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցներ՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:

7. Բանկային ավանդի պայմանագրով սահմանված Ավանդի համար տոկոսների չափը ավանդի գործողության ընթացքում Բանկի կողմից ենթակա չէ միակողմանիորեն նվազեցման:

8. Ավանդային հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Անվանական տոկոսադրույքի հիման վրա:

9. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, այն տոկոսը, որն ավանդատուն կստանա 1000 դոլար ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի համար տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման հաճախականության հետևանքով: